ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ՀՈՒԼԻՍԻ 2026թվականի N 093-Ա

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 08-Ը ՀՈՒԼԻՍԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 12 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջով՝ Արենի համայնքի ավագանին ***որոշում է.***

Հաստատել Արենի համայնքի ավագանու 08-ը հուլիսի 2026 թվականի թիվ 12 արտահերթ նիստի հետևյալ օրակարգը.

1. Արենի համայնքի ավագանու 08.07.2026 թվականի թիվ 12 նիստի օրակարգը հաստատելու մասին:

2. «Կվարցիտ» սահմանափակ պատասխանատվության ընկերության 30 հունիսի 2026թվականի գրությունը քննարկելու և Արենի համայնքի Խաչիկ բնակավայրի վարչական տարածքում գտնվող 2,41898հա արդյունաբերության, ընդերքօգտագործման եվ այլ արտադրական նշանակության հողամասի վարձավճարի չափը և պայմանները վերանայելու մասին:

3. Արենի համայնքի Խաչիկ բնակավայրի նախկին հիվանդանոցի՝ ներկայիս բազմաբնակարան շենքից 37.92 ք.մ. բնակարանը նվիրատվության կարգով Խաչիկ բնակավայրի բնակիչ Լազո Սեդրակի Ղազարյանին հանձնելու մասին:

4. Արենի համայնքի ավագանու 05.12.2025թվականի թիվ 148-Ա որոշման հավելված 2-ում և 12.03.033-Ա որոշման հավելվածում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին:

5. Արենի համայնքի ղեկավարի 2026թվականի բյուջեի կատարման 2-րդ եռամսյակի հաղորդումն ի գիտություն ընդունելու մասին:

6. Արենի համայնքի Արենի, Աղավնաձոր, Ելփին, Չիվա և Ռինդ բնակավայրերը սպասարկող հանդամիջյան ճանապարհների հարթեցման և բարեկարգման նպատակով, հրատապության հիմքով, մեկ անձից գնման ընթացակարգով իրականացվելիք աշխատանքներին համաձայնություն տալու և գումարի առավելագույն չափ սահմանելու մասին:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՍԱՀԱԿՅԱՆ ՀՈՒՍԻԿ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԱՍԱՏՐՅԱՆ ՄՀԵՐ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԽԱՉԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՉԵ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ

ՄԻՐԶՈՅԱՆ ՎԱՐԴՈՒՀԻ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ՀՈՒԼԻՍԻ 2026թվականի N 094-Ա

«ԿՎԱՐՑԻՏ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ 30 ՀՈՒՆԻՍԻ 2026ԹՎԱԿԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ԵՎ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԽԱՉԻԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 2,41898ՀԱ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ, ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՉԱՓԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՎԵՐԱՆԱՅԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ և 42-րդ կետերի պահանջով և հիմք ընդունելով այն հանգամանքը, որ

- «Կվարցիտ» ՍՊԸ-ի դիմումի և առաջարկության հիման վրա Արենի համայնքի ավագանին 05 հունիսի 2025թվականի թիվ 077-Ա որոշմամբ արդեն իսկ վերանայել է հատկացված հողամասի վարձավճարի չափը և պայմանները,
- Ընկերությունը սահմանված կարգով և ժամկետներում չի կատարել պայմանագրով ստանձնած պարտավորությունները և չի կատարել վարձավճարների և այլ վճարների վճարումները համայնքային բյուջե,
- մինչև 2025թվականի դեկտեմբերի 20-ը համայնքապետարան չի ներկայացրել հաշվետվություն ընթացիկ տարում արդյունահանած հանածոյի պաշարների վերաբերյալ և ըստ այդմ որևէ վճարում չի կատարել,
- Խաչիկ բնակավայրի վարչական տարածքում մեկ այլ հանքարդյունահանող ընկերությանը հատկացվել է համարժեք հողամաս նույն պայմաններով և տարեկան վարձավճարով և համայնքի ավագանին տարբերակված մոտեցում չի կարող ցուցաբերել նույնատիպ տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ,

Արենի համայնքի ավագանին որոշում է՝

<<Կվարցիտ>> ՍՊ ընկերության կողմից 30 հունիսի 2026թվականին ներկայացված դիմումը՝ ընկերությանը վարձակալությամբ հատկացված արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության 2,41898հա

հողամասի (կադաստրային ծածկագիրը՝ 10-025-0106-0053) վարձավաճարի չափը և պայմանները վերանայելու մասին մերժել:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՍԱՀԱԿՅԱՆ ՀՈՒՍԻԿ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԱՍԱՏՐՅԱՆ ՄՀԵՐ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԽԱՉԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՉԵ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ

ՄԻՐԶՈՅԱՆ ՎԱՐԴՈՒՀԻ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ՀՈՒԼԻՍԻ 2026թվականի N 095-Ա

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԽԱՉԻԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՆԱԽԿԻՆ ՀԻՎԱՆԴԱՆՈՑԻ՝ ՆԵՐԿԱՅԻՍ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԻՑ 37.92 Ք.Մ. ԲՆԱԿԱՐԱՆԸ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՐԳՈՎ ԽԱՉԻԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉ ԼԱԶՐ ՍԵԴՐԱԿԻ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի և Հայաստանի Հանրապետության «Քաղաքացիական օրենսգրքի» 594-596-րդ հոդվածների պահանջներով, և հիմք ընդունելով Արենի համայնքի Խաչիկ բնակավայրի բնակիչ Լազր Սեդրակի Ղազարյանի դիմումը՝ Արենի համայնքի ավագանին որոշում է՝

1. Արենի համայնքի Խաչիկ բնակավայրի նախկին հիվանդանոցի՝ ներկայիս բազմաբնակարան շենքից 10 փողոց 1 շենք բնակարան 4 հասցեում գտնվող 37.92քմ ընդհանուր մակերեսով բնակարանը նվիրատվության կարգով հանձնել Խաչիկ բնակավայրի բնակիչ Լազր Սեդրակի Ղազարյանին:
2. Իրավունք վերապահել Արենի համայնքի ղեկավարին՝ Լազր Սեդրակի Ղազարյանի հետ կնքելու սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքի նվիրատվության պայմանագիր՝ պարտադիր նոտարական վավերացմամբ և սեփականության իրավունքի փոխանցման պետական գրանցմամբ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՍԱՀԱԿՅԱՆ ՀՈՒՍԻԿ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԱՍԱՏՐՅԱՆ ՄՀԵՐ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԽԱՉԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՉԵ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ

ՄԻՐԶՈՅԱՆ ՎԱՐԴՈՒՀԻ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ՀՈՒԼԻՍԻ 2026թվականի N 096-Ա

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 05.12.2025ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 148-Ա ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾ 2-ՈՒՄ ԵՎ 12 ՄԱՐՏԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 033-Ա ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 28-րդ կետի պահանջներով՝ Արենի համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Արենի համայնքի ավագանու 05-ը դեկտեմբերի 2025 թվականի «2026 թվականի համար Արենի համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների (ՀՈԱԿ-ների) աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 148-Ա որոշման հավելված 2-ում կատարել փոփոխություններ.

1) Հավելվածի 5-րդ տողում <<5>> թիվը փոխարինել <<6>> թվով,

2) Ընդամենը տողում <<28>> թիվը փոխարինել <<29>> թվով:

2. Արենի համայնքի ավագանու 12 մարտի 2026 թվականի «Արենի համայնքի ավագանու 05 դեկտեմբերի 2025 թվականի «2026 թվականի համար Արենիի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 147-Ա որոշման հավելվածը նոր խմբագրությամբ շարադրելու մասին» թիվ 033-Ա որոշման հավելվածում կատարել լրացումներ և փոփոխություններ.

1) հավելվածի 60-րդ տողը շարադրել նոր խմբագրությամբ.

h/h	Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորը	աշխատակիցների թվաքանակը	պաշտոնային դրույքաչափը	Աշխատավարձի չափը
60	խմելու ջրերի ջրբաշխ	10.5	12	123000	1291500

2) Տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմ բաժնում ընդամենը տողը շարադրել նոր խմբագրությամբ՝

Ընդամենը	55.75	65	6279000	8969250

3) Աղյուսակի վերջին՝ ընդամենը տողը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ կերպ՝

Ընդամենը	109	119	21088200	24451450

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՍԱՀԱԿՅԱՆ ՀՈՒՍԻԿ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԱՍԱՏՐՅԱՆ ՄՀԵՐ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԽԱՉԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՉԵ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ

ՄԻՐԶՈՅԱՆ ՎԱՐԴՈՒՀԻ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ՀՈՒԼԻՍԻ 2026թվականի N 097-Ա

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ 2026 ԹՎԱԿԱՆԻ 2-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 92-րդ հոդվածի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով՝ Արենի համայնքի ավագանին որոշում է՝

Արենի համայնքի ղեկավարի բյուջեի կատարման 2026 թվականի երկրորդ եռամսյակի հաղորդումն ընդունել ի գիտություն՝ համաձայն սույն որոշման հավելվածի:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՍԱՀԱԿՅԱՆ ՀՈՒՍԻԿ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԱՍԱՏՐՅԱՆ ՄՀԵՐ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԽԱՉԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՉԵ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ

ՄԻՐԶՈՅԱՆ ՎԱՐԴՈՒՀԻ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

Հավելված Արենի համայնքի ավագանու
08.07.2026թ.-ի թիվ 097-Ա որոշման

2026թ.երկրորդ եռամսյակ

Եկամտային մաս. հազար դրամ

Եկամտատեսակ	Նախատեսված	Կատարողական	Կատարման տոկոս
Անշարժ գույքի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողի համար	6374,0	12419,7	194,8
Հողի վարձավճար համայնքների վարչական տարածքներում գտնվող հողի համար	17087,9	14342,0	83,9
Գույքահարկ	19137,0	23882,5	124,8
Տեղական տուրքեր	2033,8	7165,3	352,3
Գույքի վարձակալությունից եկամուտներ	778,0	1053,2	135,4
Աղբահանության, խմելու ջրի և ոռոգման ջրի վճարներ	9583,0	8069,0	84,2
Արտադպրոցական դաստիարակություն	1980,0	1842,0	93,0
Այլ եկամուտներ/օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ համայնքի բյուջե մուտքագրման ենթակա այլ եկամուտներ/	5300,0	4743,0	89,5
Ընդամենը սեփական եկամուտներ	**62273,7**	**73516,7**	**118,1**
Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ	264452,4	264452,4	100,0
Պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ/սուբվենցիաներ/	863,4	863,4	100,0
Կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից /սուբվենցիաներ/	37468,6	37468,6	100,0
Ընդամենը եկամուտներ	**365058,1**	**376301,1**	**103,1**
Այլ հիմնական միջոցների իրացումից մուտքեր		6581,6	
ՉԱՐՏԱԴՐՎԱԾ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ /Հողի օտարումից/ՄՈՒՏՔԵՐ	20000,0	8780,5	**43,9**

Ծախսային մաս	Նախատեսված	Կատարողական	Կատարման տոկոս
Դրամով վճարվող աշխատավարձեր և հավելավճարներ	100000,0	94380,6	94,4
Գործուղումների և շրջագայությունների ծախսեր	800,0	676,7	84,6
Էներգետիկ ծառայություններ	30000,0	26865,0	89,6
Կապի ծառայություններ	250,0	204,0	81,6
Ապահովագրական ծախսեր	100,0	91,0	91,0
Պայմանագրային ծառայությունների և ապրանքների ձեռք բերում	35000,0	30348,2	86,7
Դրամաշնորհներ	35000,0	30025,1	85,8
Սուբսիդիաներ	90000,0	81817,8	90,9
Սոցիալական նպաստներ և կենսաթոշակներ	800,0	660,0	82,5
Այլ ծախսեր	6000,0	4989,8	83,2
Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում, շինարարություն	90000,0	50673,3	56,3
Նախագծահետազոտական ծախսեր	7000,0	6705,3	95,8
Մեքենաներ և սարքավորումներ, այլ հիմնական միջոցներ	3500,0	2171,7	62,0
Ընդամենը	**398450,0**	**329608,4**	**82,7**

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ԳԵՎՈՐԳ ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ՀՈՒԼԻՍԻ 2026թվականի N 098-Ա

ՀԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԵՆԻ, ԱՂԱՎՆԱՁՈՐ, ԵԼՓԻՆ, ՉԻՎԱ և ՌԻՆԴ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԸ ՍՊԱՍԱՐԿՈՂ ՀԱՆԴԱՄԻՋՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՀԱՐԹԵՑՄԱՆ և ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ, ՀՐԱՏԱՊՈՒԹՅԱՆ ՀԻՄՔՈՎ, ՄԵԿ ԱՆՁԻՑ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ԳՈՒՄԱՐԻ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՉԱՓ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ և 42-րդ կետերի պահանջներով, հիմք ընդունելով «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, ընդառաջելով Արենի համայնքի բազմաթիվ բնակիչների խնդրանքին և հաշվի առնելով այն հանգամանքը, որ շուտով մեկնարկելու է խոտհնձի և բերքահավաքի շրջանը, իսկ ընթացիկ տարում աննախադեպ անձրևների և հեղեղումների պատճառով Արենի համայնքի Հեշին, Ուլգյուր, Վարդանես և Սպիտակավանք հանդամասերը սպասարկող հանդամիջյան ճանապարհները դարձել են տեղ-տեղ անանցանելի, Արենի համայնքի ավագանին որոշում է՝

1. Տալ համաձայնություն՝ հրատապ անհրաժեշտությամբ պայմանավորված, Արենի համայնքի Արենի, Աղավնաձոր, Ելփին, Չիվա և Ռինդ բնակավայրերի հանդամասերը սպասարկող հանդամիջյան ճանապարհների հարթեցման և բարեկարգման նպատակով, մեկ անձից գնման ընթացակարգով, իրականացվելիք ճանապարհների բարեկարգման և վերանորոգման աշխատանքներին:

2. Հաշվի առնելով տեղանքի ռելիեֆային պայմանները և կոշտ գրունտը աշխատանքները իրականացնելու համար ներգրավվել ծանր բուլդոզեր տեսակի տեխնիկա:

3. Աշխատանքների իրականացման համար 1 օրվա հատկացվելիք գումարի առավելագույն չափ սահմանել 70 000 ՀՀ դրամ:

4. Սույն որոշմամբ սահմանված աշխատանքների կատարման հսկողությունը վերապահել տվյալ բնակավայրի վարչական ղեկավարին:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվանից:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՍԱՀԱԿՅԱՆ ՀՈՒՍԻԿ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԱՍԱՏՐՅԱՆ ՄՀԵՐ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԽԱՉԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՉԵ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ

ՄԻՐԶՈՅԱՆ ՎԱՐԴՈՒՀԻ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ